

քանի որ այդպիսի ապօրինի արարքները
երբեմն մարդասպանութիւններ հոտ է բու-
րում: Միթէ քաղ. վարչութիւնը: Բայց սա
այն աստիճան թոյլ է դրում իրան, որ ոչ
ոք մաքաւած անգամ երկիւղ չէ կրում
նրանցից:

Բաղու, 24 յուլիսի

Այս թղթակցութեան նիւթը վերցնում
եմ հայկական այնպիսի մի թաղից, որի
մէջ աւելի մեծ թւով հայեր են ապրում,
քան մի այլ թաղում: Այդ՝ Ստանիսլաւսկի
անկիւն Վերինի Պրիտիսկի փողոցն է:
Այդ փողոցով են անցնում 4—5 հարկեր
8—20 տարեկան աշակերտ-աշակերտուհի-
ներ ուսումնառան գնալիս կամ վերադա-
նալիս: Բայց այդ փողոցի մի մասը իրա-
նից ներկայացնում է իսկական անտափանց:
Այդ փողոցում կայ մի մեծ հասարակ մի-
յարկան շէնք փոքրիկ խանութի դռներով:
որոնց առէկ շարան-շարան նստատեղ են
լինում անբարոյական կանայք՝ իրանց
զբաղմունքում ունենալով իշխանութիւնից
ստացած դնդին թիւով արծաթագրէ:

Այդ կանայք իրանց քիթ ու պրոնոզը
ներկայ ունեն գնալու ներկերով և պատ-
կանում են, բացի հայից, ամեն ազգի՝ լե-
հուհի, վրացուհի, գերմանուհի, թուրքուհի,
ուսուհի, իսկ դեպք մէջ հայ չէ լի-
նելու: Ժակ պատճառն այն է, որ հայկա-
կան թաղ է և երկիւղ են անում ճամուռս
ունեցող հայից...

Երբ անցնում են այդ փողոցով, հան-
գիտ չեն թողնում, մարդու ետեւից «ս...
ս...ս...» անելով խանդաղում են անցու-
ղործ անողներին, հրաւիրելով նրանց ու-
շադրութիւնը իրանց վրա:

Կիրակի և ուրբաթ օրերը դուր կը տես-
նէք հայ և թուրք բանտարկի խմբերի,
որոնք շարքով կանգնած այդ կանանց ա-
ռաջ՝ սակարկութեան մէջ են... Իսկ թէ
ինչպիսի նշաններ են անում ձեռքերով,
ոտով ու աչք և լուրջով, այդ արդէն յայտ-
նի պիտի լինի: Եւ ամա այդ բոլորը տես-
նում է հայ մարդը, կինը, աշակերտը և
աշակերտուհին, աշխարհական և հոգեւո-
րականը, քաղաքացին և իշխանութիւնների
ներկայացուցիչը: Տեսնում են, բայց սուտ-
նախորտ անցնում, և մէկը չէ կայ, որ ձայն
բարձրացնէ դրանց դէմ՝ ստիպողական ըս-
տաբան զուր, ինչպէս 1898—99 թ.թ. ոս-
տիկանապետ իշխ. Վոլոյսկիին կարգադրե-
լիս: Դիւանարայէն պարտաւոր է այդ առի-
թով բողոքելու քաղ. վարչութիւնը, որի
անդամները ոչ մէկը ոչ մի անգամ չէ
պատճառ քաղաքի թաղերը:

Տեղային մատով լուռ է:
Արեւոք ժամ պարտքն է և ձով պիտի ու-
շադրութիւնը դարձնէ այդ անբարոյականու-
թիւնն սեղմանող երեւոյթի վրա, երկուքի,
որը վարակում է նամական, Շուշու, Զան-
գեզուրի, Երևանի, Նուբուս և այլ գաւառ-
ների գիւղացիութեանը, որը՝ վարակելով
գրանցից վնասեղանական դանդաղ անտեղծ
գնում է իր հայրենի գիւղը:

Մեր համայն կարծիքով այդ երկուքի ա-
ռաջը ոչ ոք չի անի բացի քաղաքացի
Մարտիկովից, որի լուրջ ուշադրու-
թիւնն են հրաւիրում և որը կը լինի նրա
զուրկ գործը:

Մեծ Դարձարի ի սա, 24 յուլիսի
Անդրապատեան երկրորդ անգամ օրը
տեղս է գալիս մի պարսիկ բժիշկ՝ ընկերով
հետ միասին: Բժիշկը գնալու է իր հայրե-
նիքը՝ Պարսկաստան, վաճառ է մի քանի
օրով իջնել Դարբանդիսայում և ապա ճա-
նապարհը շարունակել:

Երեւոյթի օրը, յուլիսի 21-ին, նա
զուրկ է գալիս զբոսնելու և դիմում է ան-
տառի կողմը: Այս հէցն այստեղ նրա վրա
յարձակվում են մի քանի լոթի արկիւղ չա-
րադրողներ և, արքանապետ ուղղելով կրքը-
քին, թաղաւում են նրան իսկ ցղուլու:
Չարադրողները տանում են 170 ռ. կան-
խիկ փող և մօտ 1000 ռ. մուրհանգիստ:
Նոյն օրվայ գիշերը բոստոնցի վերա-
դառնալիս մենք ինքներս ականատես ե-
ղանք ինչպէս գիւղի բեօվիկն պահպանելով
շրջում էր շարադրողներին որոնելով, սա-
կայն մինչև օրս նրանց հետքը չէ գտնված,
թէ և կասկածով ձերբակալի են երկու հո-
գին, որոնցից մինը տեղացի է, միւսը ա-
լեքսանդրովից: Գիտենք, որ ամեն տեղ
անպիտան մարդիկ կան, բայց օտար հիւ-
րին կողոպտել անպատեհութիւն է հէցն ի-
րանց դարձրելիսցիներին համար, որով,
թուում է, նրանց պարտականութիւնն է
կարող և ետանդուն միջոցներով երևան
հանի կողոպտիչներին և քննաւածին վե-
րադարձել իր փողերը: Ասում են, որ
բժիշկը գրկված է անգամ ճանապարհա-
ծախից, որովհետև իրենց 170 ռ. նրա
վերջին փողերն են եղել...

Մի քանի խօսք ևս այստեղի հոգակաւոր
բոստոնցի մասին:
Այդ բոստոնց ամա՛ծը շինված է գիւղի
ծայրին դէպի անտառը: Այդ այն նպա-
տակով է, որ բոստոնց վարչութեան յար-
գելի անդամներին կարծիքով, ժամանակով
գիւղը տարածվելու է դէպի վեր, անտառ
ուղղութեամբ: Ըստ որում, նրանց հաշուով,
բոստոնց այդ դէպքում շատ լաւ տեղում
է լինի...

Չը գիտենք, երբ արեւոք կիրականանան
պատմաբան անդամները բողոքանքները
սակայ, իրողութիւնն այն է, որ այժմ
մարդ ստիպված է լինում այնտեղ գնալու

համար կտրել ահագին տարածութիւն, այն
է՝ մուշ, անկանոն փողոցներով և, որ զը-
կաւորն է, գաղփա չենք հաշիւը ձայնակ-
ցութեամբ ու նրանց երկիւղի ուղեկցու-
թեամբ...

Այս օրերս իմացայ մի անհաւատարի բան.
թղթակաղը սահմանափակում է այստեղի
բոստոնցում ոչ թէ լուրջներով, թէ կող-
տանակ, հարկեր, այլ կանուս է հազար-
ներ. ինձ յայտնեցին, որ մէկը 3000 ռ. տա-
նու է տուել...

Տեղական բարբերից եւ կուզէի յիշատա-
կել գոնէ մինը: Այս ամառ այստեղ է եկել
Կարսից ատամնաբոյժ Ն, որ բարեկեղծ և
յարգելի երեստապետներին է: Տեղի հա-
մար նա երկու փոքրիկ սենեակը վարձում
է 70 ռ. սեղօնի ընթացքում: Անցեալ օրը
տանտէրը յանկարծ հարևանի դռնամե-
քը դռնով իրան, զանգաւովում է հաշարար
դատաւորին: Տանտէրն այդ իմանալով դի-
մում է ստոր միջոցի, նա կանգնում է ա-
տամնաբոյժի դռան առաջ և եկող հիւանդ-
ներին վերադարձում է, պրօպագանդ մղե-
լով որ ատամնաբոյժը ոչինչ չէ հասկա-
նում, իսկուս է իր այցելուներին, հար-
կաւոր չէ նրա մօտ գնալ...
Կօմիտարիաներն աւելորդ են...

Չորեքշաբթի բոստոնցում Արքանաբանը
սիրողների մասնակցութեամբ խաղաց Վե-
րու յիշանալու պիտի, արտասանեց ոտա-
նաւորներ: Արքանաբանն սա՛նուն է տալի
իւր գերը:

Սողոմոնեանը արժանի է լիակատար
խախուսանքի և շնորհակալութեան. նա իր
դասախօսութիւններով, մանկական դրոշմներ
կազմակերպելով հանձնի տպագրութիւն
է թողել ընդհանուր իմաց Գեղարքարար այս
օրերս նա մեկնում է այստեղից, թէ և կար-
ծիւ կարճ ժամանակով:

Արդէն արտերը սկսել են հսկել. բերքը,
ինչպէս յայտնի է, շատ լաւ է այս տարի:
Ռուս սիրողներից խումբ է կազմվում մի
երկու ներկայացում տարւ համար:
Այստեղ էլ ցերեկները շոգ է լինում,
բայց ի հարկէ տանելի: Ամեն օր նոր ա-
մառանցականներ են գալիս... Ես.

Ս զ Ն ա ի, 27 յուլիսի

Երէկ, յուլիսի 26-ին, երեկոյան ժամը
5-ին, Ալեքսանդրեան բուլվարի վրա ա-
տարձանակի մի քանի հարուստներով սպան-
վեց Սոյանի ոստիկանական պրիստաւի
օգնական Միստրիճէ: Սպանվածը նստած
է եղել նստարանի վրա իր ընկեր՝ պրիս-
տաւի միւս օգնականի հետ. մօտիկ
կանգնած է եղել նաեւ քաղաքացի: Մի
այստան անձնատուրութիւն ետեւից իրար
վրա արձակում է ատարձանակից և ծանր
վիրաւորում է նրան մէջքից: Միստրիճէն
ուստապետ հանում է ատարձանակի և անաշող
արձակում, ապա ընկնում է և հոգին ա-
ւանդում: Սպանողը փախչում է. նրա ե-
տեւից միւս պրիստաւ արձակում է ատար-
ձանակ, բայց չէ գիպելու: Այս դէպքը մեծ
ցնցում է պատճառում մի մեծ խումբ օ-
րիորդների, որոնք պատրաստվելիս են ե-
ղել գնալ զբօսանքի ս. Նունիէ վանքը.
նրանցից մէկն ուշաթափվում է Միստրիճէ-
նի բողոքովին երեստապետ էր, 22 տարե-
կան, նրանից յետոյ մնացին կին և երե-
խայ: N. N.

Ս ա շ ա կ ա ղ գիւղ (Գանձ, գ.), 24 յուլ.
Գանձակի գաւառագետ Ն. Բ. Տառիկը
շրջելով իր խնամքի տակ գտնված գաւառի
գիւղաբայը, այսօր ատաւանական հաստ
տեղու Գիւղացիների անկող, նախկին գա-
ւառագետ Ասալիանի մահից յետոյ, այս ա-
ռաջին անգամ է, որ Տառիկը այցելում է
Սաշակաղ գիւղը:

Մանկով իր համար պատրաստված ըն-
դունարանը, նա հրաւիրեց իր մօտ Սաշա-
կաղ, Կիրանց և Բարսեղ Գիւղերի 12-
ական ներկայացուցիչներին և մօտ մի ժամ
խօսակցեց վերջիններին հետ, թոյլ տալով
որ գիւղացիներն էլ իրանց դրոշմը ու ցու-
նը ստեն. աւելորդ չեմ համարում ասել, որ
յարգելի գաւառագետը, իւրելով գիւղացի-
ներին զրկել իրանց օրվայ աշխատանքից,
կարգադրել էր 12-ական ներկայացուցիչնե-
րով բաւականատէ:

Նա նախ և առաջ կանգ առաւ գիւղում
«Բոխտուտ ինայողական դրամարկ» (СООД-
ОБОРГАТ. Касса) հիմնուլու անհրաժեշտու-
թեան վրա, ցոյց տալով այն նպատի օգու-
տը, որը տալու է այս վերջինս գիւղացի-
ներին, աղատելով վերջիններս անաղք
վաշտուներին ճիւղանքից: Այնուհետև
գաւառագետը երկու խօսեց քաղաքից գիւ-
ղը տանող ճանապարհի կառուցման մասին
և առաջարկեց գիւղացիներին դաշտային
գործերից յետոյ աշխարհ անպատճառ ձիւ-
նաճանապարհը դարձնել սալով, իսկ հակառակ
դէպքում, եթէ գիւղացիները անուշադիր
կը մնան, նա պատճառեց դիմել ոյժի, ի նկատի
ունենալով այն մեծ նշանակութիւնը, որ
ստանալական կանոնադր հաղորդակցութիւն
ունի գիւղական տնտեսութեան համար.
միաժամանակ նա յայտնեց իր պատրաս-
տակաւութիւնն աշխատելու ամեն կերպ այդ
կարևոր գործին՝ մասնակաւարեղով կառա-
վարութեան հաշին վառող և այլ անհրա-
ժեշտ գործիքներ:

Վերջում գաւառագետը խորը ընդգծեց
ուսման կարևորութիւնը գիւղացու համար,
մասնաւոր այժմ, երբ բաւական դժուա-
րացել են ապրուստ հայթայթելու պայման-
ները, նա շնչեց, որ հայերը, իբրև առաջ-
նակարգ ժողովուրդ կողմնուում, լաւ պէտք
է հասկանան կողմնուրական գործի նշանա-
կութիւնը ու մտցնեն կենսաբի մէջ, չը սպա-
սելով որ դրոշմ ստիպեն այդ անելու: Սրա
հետ միասին նա առաջարկեց գիւղի երե-
տասարդներին և փոքր ի շատէ գրագէտնե-
րին սապարեղ գալ և գործել յօգուտ ընդ-
հանուրի նիւթական բարօրութեան. բացի
այդ՝ նա կոչ արաւ. գիւղացիներին գործի
համերաշխ կերպով հարևան գիւղացիներին
հետ, խոստանալով միաժամանակ իր աշակ-
ցութիւնը ամեն բարի գործում:

Գաւառագետի սիրալիւր վերաբերմուն-
քը դէպի գիւղացիները և նրանց ծով կա-
րիքները խոր տպաւորութիւն թողեց վեր-
ջիններին վրա:

Երեք ժամ մնալուց յետոյ գաւառագետը
ճանապարհվեց այստեղից Բանանց գիւղը,
տանելով իր հետ գիւղացիների անհուն սե-
րը և համակրանքը. վերջիններին ասելով
դեռ ոչ մի գաւառագետ այսպիսի հարա-
կան հոգատարութեամբ և սիրով չէ վերա-
բերվել իրանց կարիքներին:
Սաշակաղ գիւղը Գանձակից 30 վերստ
հեռավորութեան վրա է գտնվում, ունի
առողջարար ջուր և մաքուր օդ:

Գ. Բ. Ռումանյան

Ա լ խ ա լ լ խ ա, 24 յուլիսի

Կ. Ն. Բ. Ընդ. տեղական ճիւղը վերջապէս
պատուեց իրենից և յայտարարեց, թէ
խոնարհական դաճակցիցներ է բանալու
տիկիներին և օրիորդներին սովորեցնելու
համով, հուով և խնայողութեամբ կերա-
կուրներ պատրաստելու համար:

Հայուհեաց Բարեք. Ընդ. դեռ ևս ծրա-
գիւրներ է կազմում իր ապագայ գործունե-
ութեան համար:

Դաճակալիական ընկերութիւնն էլ սպա-
սում է նոր իրագործութիւն, որի մէջ կար-
գանալ գտնի այնպիսի պիւնտներ, որոնք
համապատասխան լինեն թէ տեղական սի-
րողների ոյժերին և թէ տեղական հասա-
րակութեան ճաշակին, էտեղտիկայի և բա-
րոյական-կրթական տեսակետից:

Վերջապէս երեք ընկերութիւնները միա-
սին անընդհատ խորհում են Աղանայի
գիւղացիներին օգնութիւն հասցնելու համար
«Ինչէ յարձանք միջոցներ ծրագրելու»
Բայց անտարբեր են մեր թէ ընտրված
գործիչները և թէ հասարակութիւնը:
Ա. Աս.

ՃԱՆԱԳԱՐՆՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ ՆԵՐՔԻՆ ԵՐԻՄԱԿ *)

գ) Գիւղատնտեսութիւն. Կան բազմաթիւ
գիւղացիներ, որոնք չորս ամիս միայն պա-
րագլուցեց ունեն. մնացած ութը ամիսը
մէջքին անաղք պառկած ուսում են, այսինքն
արհեստական ճանապարհով իրանց իրանց
համար աղքատութիւն են ստեղծում: Մեր
գիւղացին երկաթգործութիւնից դէպ ուրիշ
հացի ճանապարհ չէ տեսնում: Երկաթգոր-
ծութիւնն էլ հին նահապետական ձևով. ոչ
մի նորութիւն նա չէ համոզվում մտցնել
իր պապական պարագլուցի մէջ: Նոյն
նահապետական արըրը, նոյն փողին ու
զերանքին, նոյն տափանն ու եղանը, նոյն
վարելու-ցանակը եղանակը: ՎԱՐԵՐ, Աս-
տուած որ չը տայ, կուզես ոսկէ գլուխնով
վարել, բոջ բոջ, —նա գիւղացու ուղիղ
արտադրութիւնը: Կան գիւղեր, որտեղ ա-
մենապարզ կարելի է ամենաշուտ
ամեն տեսակ բանջարեղիչներ, հատապարու-
ներ, կարտօթի, ջալամ, զապաղ, սոր և
զանազան կանաչեղիչներ, կարելի է անեց-
նել մեծ քանակութեամբ, պահել, բազմա-
նոյն հաւել, բաղրի և զանազան ընտանի, օգ-
տակար կենդանիներ: Գիւղացին ինքն
իրան այդ բանը է մտածում, իսկ առաջ-
նորդը չը կայ: Ուսուցիչը անտարբեր
է, քանանալ տղէն է բեօվիկն վաշխաւու է,
երեցիկը շա՛նաւ է. էլ հիմ պիտի առաջ-
նորդէ: Միայն Ա. Բարսեղին է որ այս
որդը ճանապարհներին հետ քալ ծանոթ
լինելով, գիւղ ու քաղաք թափառելով, իր
կենդանի դասախօսութեամբ ուղղում է գիւ-
ղացուն արքանապետի նրա կենսի ու կեն-
ցաղաքային կենսի մէջ մի օգնական նորու-
թիւն մտցնել նոր հացի ճանապարհ: Բաց
անկ դրանք համար: Ինչ կարծիք, որ Ա.
Բարսեղին այդ մարդասիրական ձգտու-
նեքը հրապարակական շնորհակալութեան
արժանի են: Բայց պիտոյ, որ Ա. Բա-
րսեղին իր առաքելական պաշտօնը
կատարեց և գիւղից կամ քաղաքից հեռա-
նալուց յետոյ չը կայ մէկը, որ յաշնդէ
նրան նոյն բարոյներով: Չը կայ մէկը, որ
խօսքը գործ դարձնէ, Ա. Բարսեղին կրքով
սիրելի մշակէ, չը է արդիւնաւոր: Գիւղա-
ցին համոզվում է, քանի չեմ դասախօսի
առաջ կանգնած է, բայց երբ դասախօսը
հեռացաւ, գիւղացին դարձեալ ընկնում է
անտարբերութեան մէջ: Ուրեմն մէկը պիտի
լինի, որ անդադար գիւղացուն ըզի:
(Կը շարունակվի)

Ս. Տէր-Ստեփանեղէկեան

*) Տես Մշակու թ 163.

Խ Օ Լ Ե Ր Ա

Ա լ խ ա լ լ խ ա, 28 յուլիսի. —Քաղա-
քում հիւանդացան 5, մեռան 3. գաւառում
հիւանդացաւ 1 հոգի:

Ի զ ա. —Մեռաւ 1 հոգի:

Ե ա ռ յ ա լ ա լ. —Գաւառում հիւանդա-
ցան 9, մեռան 4 հոգի:

Ա լ խ ա լ լ խ ա, —Յուլիսի 27-ին խօ-
ւրայից հիւանդացան 6, մեռան 4 հոգի:
Շէնկուրում գաւառի հետ հիւանդացան 10,
մեռան 5 հոգի:

Կ ռ յ շ լ ա տ դ ա. —Շարաքվայ ընթացքում
հիւանդացան 3, մեռան 1, մեռն են հի-
ւանդներ 5 հոգի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Վոլկատում սինատորական քննութիւն
նշանակելու հարցը վերջնականապէս կը
վճովի մինխտորներ խորհրդի նախագահ
Ստոլպինը Պետերբուրգ վերադառնալուց
յետոյ:

Մի քանի օր առաջ, արտասահմա-
նեան արեւելից քաղաքում, հաղորդել
էինք, որ մի շարք քաղաքական գործերի
համար ներուրէն է ապաւում: Այժմ Պետե-
րբուրգից հեռացում են «ԵԱԿՍ» լրագրին
արժանահաւատ աղբիւրից, որ այսօր, յու-
լիսի 30-ին, Նորին Կայսեր. Մեծութեան
Թագաժառանգի ծննդեան տարեդարձին,
ի նկատի առնելով Կայսրութեան մէջ ամե-
նուրիշ տիրող հանգամանքները, ներուրէն
է շնորհակալ մի շարք քաղաքական յանցանք-
ների համար: Ներկայումս շատաւ ան-
դեկութիւններ են պահանջվում իւրաքան-
չեւը շրջանի քաղաքական գործերի թւի
մասին:

Սինատի բացատրութեամբ՝ քաղաքա-
յին դուժայի այն ճայնաւորները, որոնք
հրաժարական են տալիս ճայնաւորի կո-
չովին, հրաժարում են համարվում իւրե-
զիքը ստալու օրվանց:

Սինատի տուած բացատրութեան հա-
մաձայն, ղիթիմանները ու այլ և այլ կառ-
քերի տեղերը, որոնք ամիշկական հաղոր-
դակցութիւն ունեն քաղաքների հետ, պէտք
է իրանց ձիւրի համար փոքր վճարելու
քաղաքին: Մինչև այժմ թիֆլիս-Թէլաւ
Սոյան խնդուլու պատասխին կայարանները
հրաժարվում էին այդ տուրքը վճարել,
այսուհետև, ի հարկէ, չեն կարող խուսափել:

Թիֆլիսի 5-րդ քաղաքապետ պրիս-
տաւ ուղարկել էր քիմիական լաբորատո-
րիային քննելու կովի հալած խղերի հինգ
նմուշներ, որ նա վերցրել էր զանազան
խանութներից, Գննութիւնը պարզել է, որ
այդ 5-ից երեքը կեղծված է եղել, մէկ
նմուշը ճարպ է առանց իսկական խղի որեւէ
խանութից, միւսը ճարպ խանութի կովի
և կուտահատի ձէթի անշանք քանակութեան
հետ, իսկ երրորդը՝ կովի և կուտահատ խղե-
րի խանութից: Ուրեմն 5-ից 3-ը կեղծված
է եղել: Սուք չը կայ, որ այդպիսի պայ-
մաններում թիֆլիսի քաղաքացիների ճնշող
մեծամասնութիւնը տառապելու է ստա-
մոքսի հիւանդութիւններով, մասնաւոր որ
հացի խղիւրն էլ գերադաս պայմանների
մէջ չէ:

Քաղաքային բժիշկ Եաշվիլին տեղա-
կան լաբորատորիան է ուղարկել հացից
պատրաստված կլասի մեծը՝ քննութեան են-
թարկելուն: Կլասը փխցած է դուրս եկել
Նուշը վերցված է եղել վրաց աղնակա-
նութեան թատրոնի բաւուր գտնվող բուդ-
կայից:

